նու սրբազան պատրիարքաց հրամանաւ գրեալ ի վայելումն ինձ, և յիշատակ ապագայ եղբարց. և աղաչեմ աղերսանօք՝ ի վայելելն միով Հայր մերիս յիշեսջիք ի տէր զիս և զամենայն հոգևոր և մարմնաւոր իմայինս։ Որ և յիշողքդ լիրուք յիշեալք յԱստուծոյ. աստ և ի հանդերձեալսն. ամէն.»։

«Փրի յիշատակարանս ՌՄԽԴ (=1795) յապ. իբ. ի պատրիարքարանս ամենայն հայոց ի մեծն Պոլիս»։

Պետրոս եպս. 1801ին Երուսաղէմի Ս. Յակոբի վանքը կը գտնուի (Սաւաղան. էջ 1133) և կը վարէ 1812—13 փոխանորդութեան պաշտօնը, և կ'ընդօրինակէ Ներսէս Լամբրոնացիին Մեկն. Սաղմոսաց Դաւթի ձեռագիրը (ՄՁ. Թ. 1143) անոր կցելով Լամբրոնացիին կենսագրութիւնը. նաև Կուռնելիոսի Մեկն. Յայտնութեան գիրքը (Թարգմ. Ղուկաս վրդ.ի, 1807) (ՄՁ. Թ. 559). Լուսահան 1813ին. կը վախճանի 1813ին Ս. Յակոբի վանքին մէջ և կը թաղուի Ս. Փրկչի վանքին բակը, իր տապանագիրն է հետևեալը.

«Դանձ պատուական յաւանդ դնի
Ի հողանիւթ յայս տապանի,
Մեծ վարդապետ քաջ սոփեստի,
Քարոզ կենաց Տէն արարչի,
Մեծին Պոլսոյ պատրիարգի
Զաքարիա ազգասիրի
Աշակերտեալ ձեռնասունի,
Հարցն սրբոց հետևողի,
Ի ՌՄԿԲ (=1813) և ի Մարտի է
Հայր մեր որ յերկինս.»։

ՊԵՏՐՈՍ ԵՊՍ. ԶՄՇԿԱԾԱԳՑԻ.— Մբ. կնիքը 1765. գործակատար Հնդկաց և Նս. Էրզրումի. նագըր և վեհիզ 1772ին. 1810ին վանական գործով կը մեկնի Պոլիս (ՄՁ. Թ. 85). դարձին՝ կը վախճանի Ս. Յակոբի վանքին մէջ և կը թաղուի Ս. Փրկիչ. յիշատակ թողած է մէկ ոսկի խաչ ձեռաց և մէկ փոքրիկ խաչ վզի. իր տապանագիրն է հետևեալը. «Այս է տապան հանգստեան Սրբոյ Աթոռոյս միաբան և բազմաշխատ վէքիլ Զմշկածագցի Պետրոս եպիսկոպոսի որ հանդեաւ թուին 1810, ընթերցողքդ տուք զողորմին»։

Կը կարծուի թէ՝ Զմշկածագցին է որ 1796ին ընդօրինակած